

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի այլ երկրների ԶՈՒ փորձի ուսումնասիրություն)

Կազմեց պահեստի փոխգնդապետ Ա.Ամիրզադյանը, ՊաՀԱԿ

Լավ է պաշտպանված այն քաղաքը, որը պարսպապատված է տղամարդկանցով, այլ ոչ աղյուսե պարիսպներով:
Լիկուրգուս Սպարտացի

Վերլուծելով ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի զինված ուժերի մարտական գործողությունները Իրաքում, Աֆղաստանում, ինչպես նաև ՌԴ հատուկ ռազմական օպերացիաները Չեչնիայում, Սիրիայում և Ուկրաինայում, կարելի է հաստատապես նշել, որ ժամանակակից պայմաններում քաղաքներում և բնակավայրերում զինված դիմակայությունը դարձել է առավել քան արդիական, քանզի պաշտպանության անցած քաղաքները հակառակորդի բանակների համար վերածվել և վերածվելու են գերեզմանոցների: Հաշվի առնելով այս հանգամանքը, փորձել ենք ներկայացնել քաղաքային պայմաններում առաջադրանքների արդյունավետ կատարման համար մի շարք երկրների բանակների հրամանատարության ժամանակակից հայացքները: Հատկապես վերլուծվել են բնակավայրերը պաշտպանելիս ԱՄՆ-ի բանակի ստորաբաժանումների մարտական գործողությունների ուժեղ և թույլ կողմերը: Հաշվի առնելով ժամանակակից և հեռանկարային սպառազինության, ցամաքային զորքերի ուժեղացված ստորաբաժանումների հետ փոխգործողության կարգը, դիտարկվել են քաղաքային պայմաններում ցամաքային զորքերի մարտական գործողությունների մարտավարությունը (մարտավարական չափորոշիչները): Վերլուծվել են ռազմական մասնագետների կարծիքները և ամփոփվել են բնակավայրում մարտ վարելիս զորքերի մարտական կարողությունների բարձրացմանն ուղղված հարցերը:

✣✣✣

ՆԱՏՕ-ի զինված ուժերի հրամանատարության կարծիքով, ապագայի ռազմական գործողությունների կարևոր առանձնահատկությունները կապված են հսկայական տարածքների արագացված ուրբանիզացման[1] հետ: Ամերիկացի փորձագետների գնահատմամբ արդեն 2035 թվականին ուրբանիզացված տարածքները կարող են 12-15 %-ից աճել մինչև 25-27%, ինչը էական ազդեցություն կունենա օպերատիվ խմբավորումների կազմի, տարաշարժման ձևերի, բնակավայրերում մարտավարական կազմավորումների գործողությունների մեթոդների վրա[2]:

Վերջին տասնամյակների լոկալ բնույթի հակամարտությունների վերլուծությունը, որտեղ ռազմական գործողությունների ընթացքում բնակավայրերի համար պայքարը կազմել է ցամաքային զորքերի մարտական գործողությունների հիմնական բովանդակությունը, այդ թվում՝ ԱՄՆ զորքերի մասնակցությամբ, ցույց է տալիս, որ ՆԱՏՕ-ի դաշինքի երկրների ռազմական հրամանատարությունը մեծ նշանակություն են տալիս բնակավայրերի պաշտպանությանը:

Բնակավայրերի պաշտպանությունը կարևորվում է, քանի որ ամուր շենքերով, արդյունաբերական կառույցներով և զարգացած հաղորդակցական ցանցով քաղաքների կառուցվածքը բավականին հեշտությամբ և արագ կարող է հարմարեցվել պաշտպանության համար և դառնալ ամրացված շրջան, որին տիրապետելը միշտ առնչվելու է զգալի կորուստների և ժամանակի ծախսի հետ: Որպես կանոն, քաղաքի կամ բնակավայրի պաշտպանությունը կազմակերպվում է այն դեպքում, երբ հակառակորդի նկատմամբ հնարավոր է հասնել իրական գերազանցության՝ կաշկանդելով նրա հիմնական ուժերի (խմբավորմների) գործողությունները կամ, երբ բնակավայրի պաշտպանությունը պաշտպանական օպերացիայի բաղկացուցիչ մասերից է: Ըստ ամերիկյան մասնագետների հայացքների՝ կախված գտնվելու վայրից, բնութագրերից (Աղյուսակ.1), դասավորությունից (նկ. 1), ընդհանուր պաշտպանական համակարգում բնակավայրի ընդգրկվածու-

---

[1] **Ուրբանիզացիա** (ֆրանս. urbanisation, լատ. urbanus-քաղաքային, urbs- քաղաք), հասարակության զարգացման մեջ քաղաքների դերի բարձրացման պատմական պրոցես, որն ընդգրկում է բնակչության սոցիալ–մասնագիտական, ժողովրդագրական կառուցվածքի, նրա ապրելակերպի, մշակույթի, արտադրողական ուժերի տեղաբաշխման, տարաբնակեցման և այլ փոփոխությունները։Ուրբանիզացումը ունեցել է զարգացման երկու հիմնական փուլ: Առաջին փուլում նկատվում է առավելապես քաղաքներում բնակչության համակենտրոնացման, ավելի ու ավելի ընդլայնվող մերձ-քաղաքային գոտիների հետ այդ քաղաքների օրգ. սերտաճման, դրանց հետ կապված տարաբնակեցման նոր ձևերի ու յուրահատուկ ապրելակերպի (այսպես կոչված, մետրոպոլացում) տարածման միտում: Այդ պրոցեսում հատուկ տեղ ունի միլիոնանոց աղաքների թվի աճը: Ստեղծվում են պայմաններ նյութական և հոգևոր բարձրագույն նվաճումների համար: Երկրորդ փուլում (սկսած 1960-ական թվականից)։

Ուրբանիզացումի զարգացման հետ «քաղաք» հասկացությունն աստիճանաբար փոխվում է: Գյուղատնտեսական աշխատանքի մեթոդների արդիականացումը, գյուղի ամբողջ սոցիալական նկարագրի վերափոխումը խարխլում են ըստ բնակչության զբաղմունքի բնույթի քաղաքն ու գյուղը սահմանազատելու հիմքը: Գյուղական վայրերում մշտապես ավելանում է ինդուստրիալ բնակչությունը՝ դրանով իսկ գյուղական բազմաթիվ բնակավայրեր վերածելով ոչ գյուղատնտեսականի՝ արդյունաբերականի, տրանսպորտայինի, ծառայողականի, ինչպես նաև մոտակա քաղաքային կենտրոնների բնակելի «մասնաճյուղերի»: Ինդուստրիալ գործունեության տարածման հետ, քաղաքամերձ գյուղական վայրերում բնակավայրերն արտաքնապես էլ քաղաքի տեսք են ընդունում, առաջանում են տրանսպորտային ուղիների երկայնքով ձգվող ուրբանիզացված գոտիներ, շրջաններ, մի շարք դեպքերում ագլոմերացիաները սերտաճում են առաջանում են, այսպես կոչված, մեգապոլիսներ: Ուրբանիզացումի ժամանակակից փուլին բնորոշ երևույթ է բնակչության ճոճանակային միգրացիան, երբ նկատվում է մեծ քաղաքների բնակիչների զանգվածային տեղափոխություն մերձքաղաքային բնակավայրեր, «փախուստ քաղաքներից»: https://hy.wikipedia.org/wiki/Ուրբանիզացիա

[2] И.В. Адиятуллин. Тактика действий вооруженных сил США в условиях города // Военная мысль. 2023. № 8 էջ. 43.

թյան աստիճանից և ձևավորվորված կոնկրետ իրադրությունից կարելի է ստեղծել բնակավայրի արտաքին պաշտպանություն և անմիջական բնկավայրի պաշտպանություն[3]:

Աղյուսակ 1

Բնակավայրերի բնութագրերը[4]

Բնակավայրի տեսակը	Բնակչության թվաքանակը (հազ.)	Բնակչության խտությունը (հազ. / կմ²)	Բնակավայրի մակերեսը (կմ²)	Կառուցապատման խտությունը (մ³ / կմ²)
Արվարձան	0-4,9	1,25	1-4	50-4999
Գյուղ	5-9,9	1,9	3-5	5-49 հազ.
Փոքր քաղաք	10-49,9	2,5	5-20	50-499 հազ,.
Միջին քաղաք	50-99,9	3,1	10-32	500-999 հազ.
Տեղամասային քաղաք	100-199,9	3,5	20-65	1 մլն.
Շրջանային քաղաք	200-299,9	4,3	30-70	3 մլն.
Գավառային քաղաք	300-399,9	4,9	40-80	5 մլն.
Օկրուգային քաղաք	400-499,9	5,5	40-90	7 մլն.
Տարածաշրջանային քաղաք	500-999,9	6,1	40-250	9 մլն.
Նահանգի մայրաքաղաք	1000-4999	6,6	40-100 հազ.	12-15 մլն.
Մետրոպոլիս	5000-9999	6—10	40-50 հազ.	15-18 մլն.
Մեգապոլիս	10000 և ավելի	7 և ավելի	50 հազ.և ավելի	20 մլն.և ավելի

Նկ. 1. Քաղաքների դասավորությունը[5]



Ճառագայթային Ուղղանկյուն Խառը

Ընդ որում, մի դեպքում պաշտպանվողների հիմնական ջանքերը կարող են կենտրոնացվել բնակավայրի մատույցներում, մյուս դեպքում՝ անմիջականորեն հենց բնակավայրի տարածքում: Վերջինիս դեպքում բնակավայրում նախապատրաստվում են մի քանի պաշտպանական բնագծեր: Խոշոր բնակավայրերում՝ երկու-երեք բնագիծ, փոքրերում՝ մեկ: Պաշտպանությունը կառուցվում և շարակարգվում է ծայրամասից դեպի կենտրոն: Առաջին (հիմնական) բնագիծը համարվում է գլխավոր: Բնագծի խորությունը

[3] Urban Operations Army Techniques Publication № 3-06. July, 2022.

[4] И.В. Адиятуллин. Тактика действий вооруженных сил США в условиях города // Военная мысль. 2023. № 8 էջ. 44

[5] Նույն տեղում, էջ. 45

սովորաբար ավելի մեծ է, քան հաջորդող բնագծերի խորությունը, որում կենտրոնացված են պաշտպանության հիմնական ուժերն ու միջոցները[6]:

Պաշտպանության առաջն եզրը կարող է անցնել բնակավայրի ծայրամասերով, դրանցից մի փոքր առաջ կամ խորքում: Եթե պաշտպանության առաջնի եզրն անցնում է բնակավայրի սահմաններով, ապա ծայրամասերի բոլոր մատույցները պետք է գտնվեն պահպանության ստորաբաժանումների հսկողության և կրակի պաշտպանության ներքո ու պաշպանված լինեն արգելափակոցներով, իսկ առջևի եզրի դիմացի շենքերը կարող են փլուզվել՝ հակառակորդի հարձակումը դանդաղեցնելու նպատակով: Ստորաբաժանումների կրակային միջոցները խորհուրդ է տրվում շարակարգել ոչ միայն խորությամբ, այլև բարձրությամբ՝ ստեղծելով կրակի համակարգի այսպես կոչված բազմահարկ (բազմաշերտ, многоярусный) կառուցում (նկ. 2)[7]:



Նկ. 2. Բազմահարկ (բազմաշերտ, многоярусный) քաղաքային մարտադաշտ[8]

Բնակավայրի պաշտպանության համար դիվիզիային տրվում է 10-15 կմ լայնությամբ, 8-10 կմ խորությամբ գոտի կամ պաշտպանական հատված: Գոտում (հատվածում) նշանակվում են դիվիզիայի հիմնական պաշտպանական և թիկունքային շրջանները: Հիմնական շրջանում ծավալվում են առաջին շարակարգի բրիգադները և դաշտային հրետանու խմբավորումը, ստեղծվում են երկու պաշտպանական դիրքեր, ինչպես նաև

[6] URL: https://soldat.pro/2018/07/25/vedenie-boevyx-dejstvij-v-naselennompunkte.

[7] Печаров С. Подготовка и ведение боевых действий в городе (по взглядам специалистов США и НАТО) // Зарубежное военное обозрение. 1990. № 5 С. 17—21.

[8] И.В. Адиятуллин. Тактика действий вооруженных сил США в условиях города // Военная мысль. 2023. № 8 էջ. 46

հակահարձակման անցնելու համար սարքավորվում են երկրորդ շարակարգի (ռեզերվի) ծավալման դիրքեր (բնագծեր)։ Թիկունքային շրջանում բացի երկրորդ շարակարգից (համազորային մոբիլ ռեզերվից), տեղակայվում են նաև դիվիզիայի թիկունքային ստորաբաժանումների ու հաստատությունների այլ ռեզերվներ։ Առաջին շարակարգի բրիգադների պաշտպանության ճեղքման դեպքում և դիվիզիայի երկրորդ շարակարգի (ռեզերվի) նոր դիրքերը զբաղեցնելու համար թիկունքայի շրջանի սահմաններում ստեղծվում և սարքավորվում է պաշտպանական դիրք ։

Բրիգադը կարող է ստանալ 3-6 կմ լայնությամբ, 3-4 կմ խորությամբ տեղամաս, որի սահմաններում սարքավորում են երկու պաշտպանական դիրքեր։ Առաջին շարակարգի գումարտակները ստեղծում են առաջին պաշտպանական դիրքը։ Երկրորդ դիրքը սարքավորվում է առաջինից 1-1,5 կմ հեռավորության վրա և հանդիսանում են բրիգադային ռեզերվների դիրքեր (Աղյուսակ. 2)։

Աղյուսակ 2

Պաշտպանություն իրականացնելիս ՆԱՏՕ-ի երկրների բանակների հիմնական մարտավարական նորմատիվները բնակավայրում և սովորական պայմաններում[9]

Օպերատիվ-մարտավարական նորմատիվներ	Սովորական պայմաններում			Բնակավայրերում		
	Դիվիզիա	Բրիգադ	Գումարտակ	Դիվիզիա	Բրիգադ	Գումարտակ
Պաշտպանության գոտու լայնությունը, կմ.	10-15	3-6	1,2-2	30-40	15-20	3-5
Պաշտպանության գոտու խորությունը, կմ.	8-10	3-4	մինչև 1,5	20-25	12-15	2-2,5

Բնակավայրում պաշտպանության անցած բրիգադի առաջին շարակարգում գտնվող հետևակային գումարտակին տրվում է մարտական դիրք կամ պաշտպանության շրջան 1,2-2 կմ լայնությամբ, մինչև 1,5 կմ խորությամբ։ Որոշ դեպքերում, գումարտակի (բրիգադի) հրամանատարի որոշմամբ, բնակավայրի ամենակարևոր օբյեկտները պաշտպանելու համար կարող են ստեղծվել մեկ կամ մի քանի գումարտակային հենակետեր։

Առաջին շարակարգի հետևակային վաշտի մարտական դիրքը կարող է ներառել երկու-երեք թաղամաս կամ խոշոր շինություն և կազմել 500-700 մ լայնություն, 500-600 մ խորություն։ Վաշտի մարտակարգը, որպես կանոն, կառուցվում է երկու շարակարգով, իսկ պաշտպանությունում ներառվում է դասակի հենակետեր և տրված կրակային միջոցների դիրքեր։

Հաշվի առնելով, որ խոշոր բնակավայրերը ճակատով զբաղեցնում են 10-15 կմ, միջինները՝ 5-10 կմ, իսկ փոքրերը՝ 2,5-5 կմ, պետք է ակնկալել, որ խոշոր բնակավայրերը կպաշտպանվեն դիվիզիայի, իսկ միջիններն ու փոքրերը՝ բրիգադի ուժերով։

Հետևաբար, ինչպես ստորաբաժանումների, զորամասերի և միավորումների պաշտպանության լայնությունը, այնպես էլ խորությունը բնակավայրերում 2-3 անգամ փոքր են, քան սովորական պայմաններում պաշտպանության ժամանակ։ Սա նշանակում

[9] Նույն տեղում, էջ. 47

է, որ պաշտպանության ճակատի մեկ կիլոմետրի համար ուժերի և միջոցների խտությունը 2-3 անգամ ավելի բարձր է, և դա պետք է հաշվի առնել բնակավայրի համար մարտը նախապատրաստելիս և վարելիս[10] :

Ըստ Արևմուտքի ռազմական մասնագետների՝ պաշտպանության վարումը «Օդային-ցամաքային օպերացիաների (ճակատամարտի)» հայեցակարգով, թույլ է տրվում հաջողությամբ մարտական գործողություններ վարել քանակապես շատ հակառակորդի դեմ՝ ուժերի և միջոցների 1:3 հարաբերակցությամբ: Օրինակ, համարվում է, որ ԱՄՆ-ի մեկ դիվիզիան բնակավայրում անցնելով պաշտպանության ի վիճակի է դիմակայել չորս ռուսական հարձակվող միավորումներին[11] (Աղյուսակ. 3):

Աղյուսակ 3

Կողմերի հարաբերակցությունը մարտական գործողությունների ժամանակ բնակավայրում և սովորական պայմաններում[12]

Բաց տեղանքում (ԱՄՆ : հակառակորդ)	Առաջադրանքներ	Բնակավայրում (ԱՄՆ : հակառակորդ)
1:7	Կասեցում	3:7 միչև 5:7
1:3	Պաշտպանություն նախապես պատրաստված դիրքերում	1:1 միչև 5:3
1:2,5	Պաշտպանություն հապճեպ զբաղեցրած դիրքերում	3:2 միչև 2:1
2,5:1	Հարձակում նախապես պատրաստված դիրքերի վրա	8:1 միչև 13:5
3:1	Հարձակում հապճեպ զբաղեցրած դիրքերի վրա	9:1 միչև 15:1
1:1	Հակագրոհ	3:1 միչև 5:1

Զորամասերի մարտական հնարավորությունները մեծացնելու նպատակով և կախված բնակավայրի զբաղեցրած տեղից ու դերից՝ ուժեղացման համար դիվիզիային կարող են հատկացնել տարբեր քանակությամբ ուժեր և միջոցներ: Այնուամենայնիվ, նույնիսկ առանց ուժեղացման միջոցների, մեքենայացված դիվիզիան բնակավայրի ճակատի 1 կմ պաշտպանությունում ի վիճակի է ստեղծել ուժերի և միջոցների բարձր խտություն: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հակառակորդի նկատմամբ եռակի գերազանցության հասնելու համար ԱՄՆ-ի մոտոհետևակային դիվիզիան պաշտպանության հատվածի 1 կմ-ում պետք է ունեն 0,84 (0,28×3) մոտոհետևակային գումարտակներ և 45 տանկերի խտություն: Խիտ կառուցապատման պայմաններում պաշտպանվող զորքերը կարող են 3:1-ից ավելի հարաբերակցությամբ հարձակվող կողմին հաղթել: Միևնույն ժամանակ Վիետնամի պատերազմի փորձը ցույց է տալիս, որ ամերիկյան և մարիոնետային զորքերը, Գուէ քաղաքի և Վիետնամի այլ քաղաքների գրավման համար ստեղծել էին ուժերի 6:1 հարաբերակցություն[13]:

Քաղաքում (բնակավայրում) լավ սաքավորված պաշտպանությունը կարող է էապես ազդել մարտական գործողությունների ընթացքի և արդյունքի վրա, որպես ամբողջու-

[10] FM 90-10-1. An infantryman's guide to urban combat. 3 0ctober 1995.
[11] URL: http://pentagonus.ru/publ/24-1-0-267.
[12] И.В. Адиятуллин. Тактика действий вооруженных сил США в условиях города // Военная мысль. 2023. № 8 էջ. 47
[13] URL: https://www.cia.gov/readingroom/

թյուն, այն պատճառով, որ քաղաքը պաշտպանող ուժերը ստանում են բազմաթիվ առավելություններ: Օրինակ, յուրաքանչյուր շենք և յուրաքանչյուր թաղամաս պոտենցիալ ամրություն է, որը հանդիսանում է որպես զորքերի հուսալի թաքստոց: Ենթադրվում է, որ նույնիսկ հապճեպ սաքավորված պաշտպանությունը քաղաքները վերածում են բավականին կայուն հանգույցների և պաշտպանական շրջանների, իսկ դրանց կորուստը կարող է հանգեցնել պաշտպանության կայունության խախտման ոչ միայն մարտավարական, այլև օպերատիվ մակարդակում :

Քաղաքի (բնակավայրի) պաշտպանության ընթացքում յուրաքանչյուր շենք ընդգրկվում է պաշտպանական բնագծերի համակարգում կամ պաշտպանության որպես առանձին հանգույցում, շրջանում կամ հենակետում: Ինչպես արդեն նշել ենք մարտական գործողությունները կարող են վարվել բազմաչափ մարտական տարածությունում, ներառյալ օդային, վերգետնյա, ստորգետնյա գոտիները: Նման գոտիների առավել դիտարկելի օրինակը ցույց է տրված նկար 3-ում:

Նկ. 3. Striker ՄՀԲ-ի մարտական գործողությունների բազմաչափ տարածությունը քաղաքում[14]:



Քաղաքի (բնակավայրի) պաշտպանության համար որոշվում են այն ուժերի և միջոցների կազմը, որոնց առաջադրվում է կոնկրետ խնդիրներ, սահմանվում է պաշտպանության նախապատրաստման, քաղաքի սահմաններից դուրս պաշտպանվող ստորաբաժանումների ապահովման և աջակցության կարգը:

Ըստ ԱՄՆ բանակի պաշտոնաթող գեներալ-մայոր Ռոբերտ Հ. Սքեյլսի, բնակավայրի պաշտպանության ժամանակ յուրաքանչյուր շենք և յուրաքանչյուր թաղամաս, որը բաղկացած է քարե տներից, ապահովում է պաշտպանվող զորքերի կայուն պատսպարումը և թույլ է տալիս հարձակվող կողմին ապակողմնորոշել որոշակի հատվածում կամ տարածքում իրենց կազմի և ուժերի ճշգրիտ գտնվելու առումով: Պաշտպանության

[14] В.Вепрецкий, Е. Лысенко. Оборона в урбанизированном районе (по взглядам командования армии США) // Армейский сборник №1 2023 г. https://army.ric.mil.ru/Stati/item/461032/?ysclid=lmz21ga36m904741370

շրջանները պատրաստվում են այնպիսի հաշվարկով, որ ունենան շրջանաձև տեսանելիություն և գնդակոծության հնարավորություն: Փողոցների երկայնքով, հրապարակներում և պաշպանական շրջանների կցատեղերում կահավորված դիրքերում գնդացիրները տեղադրվում են մեկական կամ խմբերով՝ կողային գնդակոծության և խաչաձև կրակ վարելու նպատակով: Հետևակի հակատանկային միջոցներն առավել հաճախ տեղադրվում են նկուղներում և շենքերի առաջին հարկերում: Բնակավայրում ստեղծվում են ականապատ դաշտեր, բարիկադներ և այլ արգելապատնեշներ (արգելափակոցներ): Փոքր ստորաբաժանումներով տարաշարժվելու համար նախապատրաստվում են հաղորդակցության ուղիներ, իսկ շենքերի միջնապատերին անցուղիներ են բացվում:

Շենքերի միջև, բակերում, հրապարակներում և զբոսայգիներում սարքավորվում են խրամատներ, ճեղքեր, խրամուղիներ, հաղորդակցության անցատեղեր:

Տանկերը տեղակայվում են դիրքերում՝ ուղիղ նշանառությամբ կրակ վարելու համար, որպեսզի ապահովեն բարիկադների, փողոցների խաչմերուկների, հրապարակների, զբոսայգիների և այլ տարածքների պաշտպանությունը:

Պաշտպանությունն ուժեղացնելու կամ հակագրոհներ իրականացնելու համար ռեզերվները (երկրորդ շարակարգերը) տեղակայվում են այնպիսի վայրերում, որպեսզի ապահովեն դրանց արագ առաջխաղացումը: Հակառակորդի շրջառման տարաշարժը և բնակավայրը գրավելու նրա փորձերը հետմղելու նպատակով ստեղծվում է ուժեղ շարժական ռեզերվ, որը տեղակայվում է բնակավայրի սահմաններից դուրս: Ռեզերվները հիմնականում օգտագործվում են պաշտպանվողներին շրջապատելու կամ արգելափակելու հակառակորդի փորձերը հետմղելու, ինչպես նաև հակագրոհներ իրականացնելու կամ թևերն ու թիկունքն ապահովելու համար:

Պաշտպանության հանգույցները հիմնականում ստեղծվում են կառուցապատված շրջանի կենտրոնում և ավելի հազվադեպ՝ ծայրամասերում, ընդ որում նրանք, որպես կանոն, պատրաստվում են շրջանաձև պաշտպանության՝ զարգացած կրակային համակարգով:

Առանձնահատուկ նշանակություն է տրվում կարևոր օբյեկտների մատույցների և առանձին շենքերի պաշտպանությանը: Ենթադրվում է, որ դրանց մատույցներում պետք է ստեղծվեն ինժեներական արգելափակոցներ և ականապատ դաշտեր, իսկ ներսում հնարավորինս շատ հիմնական և պահեստային կրակային դիրքեր, անձնակազմի համար հուսալի թաքստոցներ և ստորգետնյա սողանցքեր՝ տարաշարժի համար: Դրանք պետք է ապահովված լինեն հուսալի կապով, բավարար քանակությամբ զինամթերքով, պարենամթերքով, ջրով և դեղորայքով: Շենքում պաշտպանվող ստորաբաժանմանը խորհուրդ է տրվում հնարավորինս մոտ թողնել հակառակորդին, այնուհետև կենտրոնացված կրակով և նռնակներով ոչնչացնել նրանց անմիջապես շենքի դիմաց: Հրետակոծության և հակառակորդի ավիացիայի հարվածների ժամանակ կայազորը պետք է պատսպարվի ապաստարաններում՝ վերևում թողնելով դիտորդներին և հերթապահ կրակային միջոցները:

Քաղաքի մատույցներում հակառակորդի զորքերի հարձակման տեմպը նվազեցնելու համար կարող են տեղադրվել տարբեր նշանակության ականապատ դաշտեր, որոնց նկարագրությունը ներկայացված է ստորև.



Ականապատ դաշտի կործանարար ազդեցության չափանիշներն են պայթեցման և ոչնչացման հավանականությունը: Նկար 4-ում ներկայացված է ականային արգելափակոցների գծային խտությանը երեք տեսակի մարտական մեքենաների հանդիպման կախվածության հավանականությունը:

Նկ. 4. Պայթման կախվածությունը ականապատման խտությունից[15]



Դաշտային հրետանին պաշտպանության մեջ պետք է օգտագործվի այնպես, որ ապահովվի հակառակորդի արդյունավետ խոցումը: Օրինակ՝ բնակավայրի մատույցներում մարտը վարելիս նրա հիմնական ջանքերը խորհուրդ են տրվում կենտրոնացնել հարձակվող կենդանի ուժի և տեխնիկայի ոչնչացմանը գերճշգրիտ և սովորական զինամթերքով, ինչպես նաև տեղանքի հեռավոր ականապատման ճանապարհով: Քաղաքում (բնակավայրում) անմիջական մարտական գործողությունների ժամանակ հրանոթները նպատակահարմար է տեղակայել հարձակման հավանական ուղղություններում՝ հակառակորդի տանկերը և այլ զրահապատ թիրախները ոչնչացնելու, կենդանի

[15] https://army.ric.mil.ru/Stati/item/461032/?ysclid=lmz21ga36m904741370

ուժը նրանից կտրելու, կրակային միջոցները ճնշելու առաջադրանքով և այլն: Զորքերի պաշտպանական կարողությունները բարձրացնելու նպատակով հնարավոր է հրետանու կիրառումը նաև հակառակորդի տեղակայման վայրերում շենքերի և այլ օբյեկտների ոչնչացման համար: Կենտրոնացված կրակը նախապատրաստվում է ըստ շրջանների՝ հակառակորդի հնարավոր կուտակումների ուղղությամբ, իսկ արգելափակիչ կրակը՝ պաշտպանության առանձին հատվածների, հրապարակների և թաքնված մատույցներով հակառակորդի ներթափանցման հավանական ուղղությամբ: Պաշտպանության հատվածում հակառակորդի սեպվելու դեպքում ստորաբաժանումների և զորամասերի ջանքերն ուղղվում են հարձակվող զորքերի ոչնչացմանը: Եթե սեպված խմբավորմանը չի հաջողվում ոչնչացնել առաջին շարակարգի ուժերով, ապա զորքերը (երկրորդ շարակարգ) հակագրոհ իրականացնելու համար առաջ են քաշվում նախապես նախանշված և նախապատրաստված գաղտնի երթուղիներով դեպի ծավալման բնագիծ: Բնակավայրերում հակագրոհները, որոնք շենքերը կրկին գրավելու նպատակով գրոհի բնույթ են կրում, խորհուրդ է տրվում իրականացնել փոքր ուժերով մատչելի ուղղություններով[16]:

Ավիացիան քաղաքի (բնակավայրի) պաշտպանության ընթացքում դիտվում է որպես հարվածային ուժի հիմնական միջոցներից մեկը: Օբյեկտների կրակային խոցման գործում ավիացիայի մասնաբաժինը կազմում է 60%: Միևնույն ժամանակ AN-64 մարտական ուղղաթիռների հիմնական մասը, որոնք ունեն համեմատաբար մեծ բեռնատարողություն, արագություն և կենսունակություն նախատեսվում է կիրառել հակառակորդի գրոհները հետ մղելու, մարտի ընթացքում բնակավայրի առանցքային օբյեկտները պահելու, ինչպես նաև հակագրոհների ժամանակ իրենց ստորաբաժանումներին կրակային աջակցություն ցուցաբերելու համար: Որպես տրանսպորտադեսանտային ուղղաթիռներ, ըստ երևույթին, սպառազինության մեջ կմնան CH-47B և CH-54 ուղղաթիռների արդիականացված նմուշները: CN-47B ուղղաթիռն ունակ է վերցնել լրիվ սպառազինված 33-55 մարդ կամ մինչև 10 տոննա բեռ[17]. Այս ուղղաթիռների կիրառումը նախատեսվում է առաջին հերթին հարձակման չենթարկված տարածքներից ստորաբաժանումների տարաշարժումն ապահովելու, ինչպես թիկունքում, այնպես էլ հակառակորդի զորքերի կողմից բնակավայրը շրջանցելու ճանապարհներին դեսանտ իջնելու համար[18]:

Մարտական պատրաստության ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում բանակային ավիացիայի և հրետանու միջև փոխգործողության կազմակերպմանը: Դաշտային հրետանին և ականանետերը կարևոր դեր են խաղում պաշտպանվող զորքերի գործողությունների ապահովման ժամանակ, հատկապես մարտակարգերում (երթային շարասյուններում) գտնվող կառավարման կետերի, հակառակորդի զենիթային միջոցների ճնշման ընթացքում: Այս խնդիրն առաջարկվում է լուծել դաշտային հրետանու, կրակային աջակցության ուղղաթիռների և A-10 գրոհային ավիացիայի համատեղ ջանքերով: Այս առումով ԱՄՆ բանակի պաշտոնաթող գեներալ-մայոր Ռոբերտ Հ. Սքեյլսի կարծիքով բնակավայրում մարտական գործողություններ վարելիս առաջնային խնդիրը պետք է համարել ղեկավարման կետերի, գումարտակ - բրիգադ օղակում կապի, հրետանային կրակի կառավարման կետերի, բանակային և գրոհային ավիացիան դեմ պայքարն ուժեղացնելու հնարավորությունների որոնումը:

Ապագայում քաղաքներում (բնակավայրերում) մարտերը հնարավոր է վարվեն նաև սպառազինության ռոբոտացված նմուշների կիրառմամբ, ռոբոտացված տանկային

[16] FM 90-10-1. An infantryman's guide to urban combat.

[17] URL: https://ru.wikipedia.org/wiki/Boeing_CH-47_Chinook

[18] URL: https://militaryarticle.ru/zarubezhnoe-voennoe-obozrenie/2000-zvo/6586-brigady-armejskoj-aviaciidivizij-suhoputnyh-vojsk

համալիրներով, ռոբոտացված գնդացիրներով, նռնականետերով և ՀՏՀՀ կայանքներով: Մարտական գործողություններում դրանց օգտագործումը հեռանկարային է համարվում ոչ միայն անձնակազմի կորուստները նվազեցնելու, այլև մարտական խնդիրների կատարման համար, որոնք մարդը կատարում է կամ անարդյունավետ, կամ ընդհանրապես ի վիճակի չէ կատարել: Մասնագետների կարծիքով մարտում ռոբոտացված համակարգերի կիրառման ամենակարևոր ոլորտներն են.

- դիտարկման և հետախուզության խնդիրների լուծումը,
- տանկերի, ՀՄՄ-ների, ԶՓՄ-ների և այլ զրահապատ թիրախների խոցումը,
- ականապատ արգելափակոցների հայտնաբերումը և այլն[19]:

Ներկայումս ԱՄՆ բանակում մշակվել է «Демон» հեռակառավարմամբ փորձարարական ավտոմատացված համակարգը, որը բաղկացած է փոքրածավալ հակատանկային հրթիռային համալիրից և բազային կառավարման մեքենայից՝ տանկ, ՀՄՄ կամ համապատասխան սարքավորումներով հագեցած այլ օբյեկտ: Ամերիկացի հետազոտող Ռոբ Կոպինգերի կարծիքով բնակավայրում «Демон» համակարգի կիրառումը թույլ կտա մեծացնել զրահապատ օբյեկտների խոցման հնարավորությունները 2-3 անգամ: ԱՄՆ բանակում բնակավայրում զորքերի տարաշարժությունը բարձրացնելու համար կարող է կիրառվել նաև ականազերծման ռոբոտային համակարգ: Այդ համակարգը բաղկացած է M60A2 տանկի բազայի վրա սարքավորված գլդոնավոր և երկարացված լիցքով ականազերծիչներից, անցուղիների նշման սարքից, ինչպես նաև պաշտպանության համար հատուկ սարքավորված M114 զրահափոխադրիչից: Երկու շարժական ռոբոտային համակարգերն էլ փորձարկվել են մարտական իրադրությանը մոտ պայմաններում[20]:

Ուշադրության է արժանի գնդապետ Գ. Ի. Ավդոխինի՝ ԱՄՆ բանակի կողմից հեռավորական ականապատման համակարգերի, որպես բնակավայրին հակառակորդի մոտեցումն արգելելու, պաշտպանության առաջնագծի դիմաց յուրային ականապատ դաշտերում անցումներն ու ճեղքվածքները փակելու համար բարձր մոբիլություն ունեցող միջոցների կիրառման վերաբերյալ կարծիքը: Զորքերի հարձակման գոտում տեղանքի հեռավորական ականապատումը պլանավորվում է իրականացնել ավիացիայի և հրթիռահրետանային հեռավորական ականապատման համակարգերով՝ գրոհի անցման բնագիծ առաջքաշման ժամանակաշրջանում, որի արդյուքում նախատեսվում է ականապատ դաշտերով ծածկել առաջքաշման անմիջական երթուղիներով շարժվող շարասյունները: Այսպես, բնակավայրի պաշտպանության ընթացքում հակառակորդի գրոհի անցման բնագիծ առաջքաշման ժամանակաշրջանում ամերիկյան մեքենայացված դիվիզիան ի վիճակի է ծածկել հակառակորդի 7-8 գումարտակ (դիվիզիոն), այսինքն, դիվիզիայի առաջին շարակարգի կազմի մինչև մեկուկես գնդեր: Հետևաբար, միայն հեռավորական ականապատման միջոցների օգնությամբ է հնարավոր խափանել գրոհի անցման բնագիծ կազմակերպված առաջքաշումը և 5-6 ժամով հարվածը հետաձգել[21]:

Ռադիոէլեկտրոնային պայքարը (ՌԷՊ) դիտարկվում է որպես մարտի բաղկացուցիչ մաս, քանի որ զորքերի և զինատեսակների կառավարման կազմալուծումը համարվում է երաշխավորված հաղթանակի բանալին: Դա նշանակում է, որ մարտավարական օղակում կազմակերպվելու է յուրօրինակ «ռադիոէլեկտրոնային մարտ»: Մասնագետների կարծիքով ՌԷՊ-ը բնակավայրերի պաշտպանության պայմաններում էական առավելություններ ունի: Այն պայմանավորված է հարձակվող կողմի ռադիոէլեկտրոնային միջոցների վրա լայն ազդեցության հնարավորությամբ և բնակավայրերում երկաթբետոնե կառույցների անդրադարձող ու թուլացնող ազդեցության արդյունքում յուրային միջոցների վրա

[19] URL: https://zavtra.ru/books/osnovnie_prioriteti_strategii_natcional_noj_oboroni_ssha_2022
[20] URL: https://en.wikipedia.org/wiki/BAE_Systems_Demon
[21] URL: https://militaryarticle.ru/voennaya-mysl/1991-vm/8419-oboronav-uslovijah-distancionnogo-minirovanija

ռադիոէլեկտրոնային ազդեցության սահմանափակ հնարավորություններով: Օրինակ՝ ԱՄՆ դիվիզիայի կազմում գտնվող հետախուզական գումարտակը և ՌԷՊ-ն իրենց միջոցներով կարող են պարբերաբար հետևել 60-80 ռադիոցանցերի աշխատանքին 0,5-300 ՄՀց տիրույթում, մեկ ժամվա ընթացքում որոշել 0,5-150 ՄՀց տիրույթում աշխատող 400-420 ռադիոմիջոցների գտնվելու վայրը, միաժամանակ ռադիոխանգարումներ առաջացնել 2-150 ՄՀց միջակայքում աշխատող 30-32 հաճախականություններում: Այսպիսի հնարավորությունների դեպքում մոտոհրաձգային դիվիզիայի կապի համակարգը (ռադիոէլեկտրոնային միջոցների առանց սահմանափակումների շահագործման դեպքում) կարող է բացահայտվել 2-3 ժամում, իսկ դիվիզիայի հրամանատարական կետը՝ 1 ժամում: Այնուհետև, ռադիոճնշման միջոցներով կարող են խաթարվել 85% ԿԱ և 15% ԳԿԱ կապերը, որոնք կազմակերպվում են դիվիզիայի ղեկավարման կետից, ինչն իր հերթին կհանգեցնի զորքերի կառավարման էական խաթարմանը[22]: Այս ամենը, մասնագետների կարծիքով, թույլ կտա բնակավայրը պաշտպանելիս զգալիորեն բարձրացնել զորքերի մարտական հնարավորությունները[23]:

Ուստի, բնակավայրերի պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների հիմնական միտումը կարելի է համարել տեխնիկական միջոցների համատարած կիրառումը, համառ պաշտպանությունը մատույցներում և բնակավայրի ներսում, խորը կրակային խոցման և հեռավորական ականապատման հետ համատեղ մարտական գործողությունների վարման մարտական կառուցվածքի ամբողջ խորությամբ հարձակվող խմբավորման մարտավարական օդային դեսանտի, աերոմոբիլային ուժերի, դիվերսիոն-հետախուզական խմբերի օգտագործումը :

Բնակավայրի պաշտպանության **առավել ուժեղ կողմերն** են.

- պաշտպանության հագեցվածությունը զինված պայքարի տարբեր ժամանակակից տեխնիկական միջոցներով,
- ուժերի և միջոցների տեղաբաշխումը ոչ միայն խորությամբ, այլև բարձրությամբ,
- ուժերի և միջոցների համեմատաբար բարձր խտությունը,
- բոլոր մատչելի ուղղություններով հզոր կրակի համադրությունը տարբեր արգելափակոցների հետ,
- ուժեղ ռեզերվների ստեղծումը, որոնք թույլ կտան հարվածներ հասցնել հարձակվող զորքերի թևերին ու թիկունքին,
- պաշտպանության ամբողջ խորությամբ ավերածությունների օգտագործման հետ միասին արգելափակոցների խորը շարակարգված համակարգը

Բնակավայրի պաշտպանության **թույլ կողմերն են**.

- մեծ թվով բաց մատույցների և չգնդակոծվող հատվածների առկայությունը, որոնք թույլ կտան հակառակորդին դուրս գալ հենակետերի և դիմադրության հանգույցների թևեր ու թիկունք, ինչը հնարավորություն կտա մասնատել, շրջապատել և ոչնչացնել պաշտպանվողներին,
- չկառուցապատված տարածքներում (այգիներում, պուրակներում, մարզադաշտերում և այլն) համեմատաբար ավելի հեշտ, քան դաշտային պայմաններում, ռեզերվների և հրետանու տեղակայման հնարավորությունը,
- ստորգետնյա հաղորդակցությունների և կառույցների առկայությունը, որոնք կարող են թույլ տալ հակառակորդին գաղտի թափանցել պաշտպանության խորքը,

[22] URL: http://pentagonus.ru/publ/radioehlektronnaja_borba_v_sukhoputnykh_vojskakh_vooruzhennykh_sil_ssha_2018/11-1-0-2873

[23] Նույն տեղում

- զորքերի ապակենտրոնացվածության հետ կապված դրանց կառավարման բարդությունը ,
- նյութական ապահովման բարդությունը:

Հեռանկարում բնակավայրի պաշտպանության ժամանակ պետք է սպասել ռազմական գործողությունների գոյություն ունեցող և նոր ձևերի կիրառում, ինչպիսիք են ուղղաթիռային օդային մարտը, կրակային մարտը, հակատանկային ուղղաթիռային հարվածը, ռոբոտացված ստորաբաժանումների մարտական գործողությունները և այլն:

Եզրակացություն

1) Քաղաքը (բնակավայրը) պաշտպանելիս պետք է ակնկալել, որ պաշտպանվող զորքերն օգտագործելով պաշտպանության արտաքին և ներքին սահմանները, ինչպես նաև քաղաքի (բնակավայրի) օդային, ցամաքային, ստորգետնյա տարածություններն ի վիճակի են բավարար ուժերով ու միջոցներով մարտական խնդիրների միաժամանակյա և ակտիվ գործողությունների իրականացմամբ հակազդել քաղաքը գրավելու հակառակորդի զորքերի փորձերին:

2) Քաղաքը (բնակավայրը) պաշտպանելիս պետք է նկատառել, որ հակառակորդը ամենայն հավանականությամբ փորձելու է ձգտել և հասնել.

- պաշտպանվողների խոցելի տեղերի բացահայտմանը,
- պաշպանվող զորքերի (ուժերի ու միջոցների) կենսաապահովման և ենթակառուցվածքների հիմնական օբյեկտների գրավմանը կամ ոչնչացմանը,
- օպերատիվ և ֆիզիկական միջավայրում քաղաքի (բնակավայրի) մեկուսացմանը (շրջափակմանը),
- պաշպանվողների դիրքավորման, ցամաքային և օդային նավագնացության կարողությունների սահմանափակմանը,
- լոգիստիկայի վերահսկմանը, առաջին հերթին պաշպանող ուժերի մատակարարման ուղղիների փակմանը,
- յուրային զորքերի (ուժերի ու միջոցների) պոտենցյալ հնարավորությունների, ինչպես նաև դրանց իրականացման պլանների վերաբերյալ, պաշպանվողներին մոլորության մեջ գցելուն,
- քաղաքի (բնակավայրի) բնակչության դիմակայությանը մասնակցելու նվազեցմանը կամ սահմանափակմանը,
- պաշտպանվողների կրիտիկական ենթակառուցվածքի օբյեկտներում և կառավարման ցանցերում «կազմակերպված քաոսի» ստեղծմանը,
- խաղաղ բնակչության տարհանման և պաշտպանվողների ելքի (գերեվարման) համար միջանցքների ստեղծմանը,
- գործառնապես միավորված հետախուզության և խոցման համալիրներով (կրակային, ռադիոէլեկտրոնային, օպտիկա-էլեկտրոնային և այլն) պաշտպանվողների ներուժի ոչ կոնտակտային ընտրողական նվազեցմանը,
- պաշտպանության ամբողջականության, նրա մարտակարգի տարրերի փոխգործողության (համաձայնեցված կիրառման), կայուն գործունեության և կազմակերպված տեղաշարժի ու տարաշարժի խաթարմանը,
- ռազմավարական և օպերատիվ նշանակություն ունեցող քաղաքային գոտիները վերահսկողության տակ վերցնելուն,
- մարտական տարածքի ամբողջականության բաժանմանը մեկուսացված միավորների, որին պետք է հաջորդի պաշտպանող ուժերի արգելափակումը (շրջափակումը) և դրանց մաս-մաս ոչնչացումը:

3) Մասնագետների կարծիքով, բնակավայրում մարտական գործողությունների իրականացմանը վերաբերող ժամանակակից դրույթների իրականացումը, ցամաքային զորքերի մարտական կարողությունների զարգացման հետ մեկտեղ, կնպաստի դրանց հաջող իրականացմանը: Միևնույն ժամանակ, բնակավայրերում մարտեր վարելիս ռոբոտատեխնիկայի լայն կիրառման համար անհրաժեշտ է զգալի ուշադրություն դարձնել տարբեր դասերի համալիրների ստեղծմանն ու զարգացմանը :